ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ Արմավիրի մարզի «Վանանդի միջնակարգ դպրոց» և «Տալվորիկի հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ների միացյալ խորհուրդը հայտարարում է բաց մրցույթ՝ հաստատության տնօրենի թափուր պաշտոնի համար:

Հաստատության տնօրենի պաշտոնի համար անցկացվող մրցույթին մասնակցելու պարտադիր պայմաններն են՝

1. ՀՀ քաղաքացիությունը,
2. <<Հանրակրթության մասին>> օրենքի 12-րդ հոդվածի 17-րդ մասով սահմանված հիմքերի բացակայությունը:

Մրցույթին մասնակցելու համար պահանջվող փաստաթղթերն են՝

1. Դիմում՝ հաստատության կառավարման խորհրդի նախագահի անունով,
2. ՀՀ քաղաքացու անձնագրի կամ նույնականացման քարտի պատճենը (բնօրինակի հետ),
3. հաստատության ղեկավարման իրավունքի (հավաստագրի) պատճենը (բնօրինակի հետ),
4. տվյալ հաստատության զարգացման ծրագիրը (որը հավակնորդը կարող է ներկայացնել մինչև գործերի ընդունման ժամկետի ավարտը, այդ թվում՝ էլեկտրոնային տարբերակով), որը խորհրդի որոշմամբ լիազորված խորհրդի անդամը հավակնորդի կողմից տրամադրելուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնում է հրապարակման տվյալ դպրոցի պաշտոնական կայքում, ինչպես նաև տրամադրում է խորհրդի մյուս անդամներին,
5. ինքնակենսագրություն:

Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ: Փաստաթղթերի ընդունումը կանցկացվի ըստ կարգի:

Փաստաթղթերն ընդունվում են 2022 թվականի մայիսի 17-ից մինչև 2022 թվականի հունիսի 6-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 09:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի և օրենքով սահմանված ոչ աշխատանքային՝ տոնական և հիշատակի օրերից, «Վանանդի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ում:

Մրցույթը տեղի կունենա 2022 թվականի հունիսի 20-ին՝ ժամը 15:00-ին, ՀՀ Արմավիրի մարզի «Վանանդի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ում, հասցեն՝ ՀՀ Արմավիրի մարզ, գյուղ Վանանդ, Պարույր Սևակ 6:

Տեղեկությունների համար զանգահարել՝ 093 205070 կամ 077690015 հեռախոսահամարներով, էլեկտրոնային հասցե՝ vanandidproc@mail.ru :

Քաղվածք

«ՎԱՆԱՆԴԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ԵՎ «ՏԱԼՎՈՐԻԿԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-ՆԵՐԻ ՄԻԱՑՅԱԼ ԽՈՐՀՐԴԻ 2022 թ. ՄԱՅԻՍԻ 13-ԻՆ ԿԱՅԱՑԱԾ N 11 ՆԻՍՏԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԻՑ

Նիստը գումարվել է 2021 թ –ի մայիսի 13–ին
Նիստին մասնակցում են խորհրդի 14 / տասնչորս / անդամ :

ՕՐԱԿԱՐԳ

1. «Վանանդի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ –ի գործադիր տնօրենի պաշտոնի թափուր տեղի համար մրցույթի հայտարարության մասին / զեկուցող՝ Նվեր Պետրոսյան /:

ԼՍԵՑԻՆ.

Նվեր Պետրոսյանը ներկայացրեց, որ «Վանանդի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի նախկին տնօրեն Հայկ Խաչիկյանն այլ աշխատանքի անցնելու կապակցությամբ, իր դիմումի համաձայն ազատվել է աշխատանքից և «Վանանդի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ –ում անցկացվելու է դպրոցի գործադիր տնօրենի պաշտոնի թափուր տեղի համար մրցույթ:

Հիմք ընդունելով ՀՀ Կառավարության 2010 թվականի N 319-Ն որոշմամբ հաստատված կարգի 2.2 կետի պահանջը՝ այն է՝ « Սույն կարգի 2.1-ին կետով սահմանված դեպքերում խորհուրդը տնօրենի թափուր պաշտոն առաջանալու օրվանից հետո՝ 3 աշխատանքային օրվա ընթացքում, ընդունում է տնօրենի պաշտոնի թափուր տեղի համար մրցույթ հայտարարելու մասին որոշում: Խորհուրդը, տնօրենի թափուր պաշտոն առաջանալու օրվանից հաշված, առավելագույնը եռամսյա ժամկետում (չներառելով ամառային արձակուրդի ժամանակահատվածը) կազմակերպում և անցկացնում է տնօրենի պաշտոնի թափուր տեղի համար մրցույթ»:

Հիմք ընդունելով վերոնշյալը.

ՈՐՈՇԵՑԻՆ

1. «Վանանդի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պաշտոնի համար անցկացնել մրցույթ:
2. Փաստաթղթերի ընդունման ժամկետ սահմանել 2022 թ-ի մայիսի 17-ից մինչև հունիսի 6-ը ներառյալ՝ մինչև ժամը 15:00–ն:
3. Մրցույթը նշանակել 2022 թ–ի հունիսի 20–ին՝ ժամը 15:00-ին:
4. ՀՀ Կառավարության 2010 թվականի N 319-Ն որոշմամբ հաստատված կարգի 3-րդ և 4-րդ կետերի պահանջների համապատասխան, խորհրդի որոշումը ներկայացնել ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարին և ՀՀ Արմավիրի մարզպետին և հրապարակել հայտարարությունը:

ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Ն. ՊԵՏՐՈՍՅԱՆ

ԽՈՐՀՐԴԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Լ. ՊԱՊԻԿՅԱՆ